

ՔՈՍՅԱՆ ԱՐԱՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ Մ.Թ.Ա. XV ԴԱՐԻ ԽԵԹԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ (աղբյուրների տեսություն)

Հայկական լեռնաշխարհի վաղ շրջանի պատմության գրավոր աղբյուրների շարքում առանձնահատուկ տեղ ունեն Փոքր Ասիայում մ.թ.ա. XVII-XIII դդ. գոյատևած խեթական տերության տարբեր արքաների օրոք կազմված սեպագրական տեքստերը: Դրանք մեծաքանակ և գերազանցապես եզակի տեղեկություններ են պարունակում Լեռնաշխարհի արևմտյան շրջաններում գոյություն ունեցած քաղաքական միավորների վերաբերյալ: Այդ տեքստերն ընդգրկում են ռազմաքաղաքական և ծիսապաշտամունքային ոլորտները, ինչպես նաև վերաբերում են մեր տարածաշրջանի տեղագրության և անվանաբանության հարցերին: Վերոհիշյալ տեղեկությունները միաժամանակ արտակարգ կարևոր են հատկապես այն առումով, որ դրանցում վկայված անվանաբանական նյութերը շատ դեպքերում եզակի աղբյուրներ են Հայկական լեռնաշխարհում նշված ժամանակաշրջանում տիրող էթնոլեզվական իրավիճակի պարզաբանման համար: Առ այսօր հայագիտական հետազոտություններում խեթական աղբյուրների ընձեռած հնարավորությունները լիարժեք օգտագործված չեն, ինչի պատճառը սկզբնաղբյուրների թերի ներգրավումն է հետազոտության ոլորտ:

Ստորև առաջարկվող հոդվածի նպատակն է ներկայացնել մ.թ.ա. XV դարով թվագրվող առ այսօր հայտնի խեթական բոլոր տեքստերը, որոնք այս կամ այն չափով վերաբերում են Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորներին¹:

¹ Մ.թ.ա. XV դարի խեթական սեպագրական աղբյուրների գիտական հրատա-

Մ.թ.ա. XV դարի տեքստերը գերազանցապես վերաբերում են դեպի արևելք խեթական երկու արքաների՝ Թուդխալիյաս II-ի և նրա հաջորդ Աննուվանդաս I-ի (մ.թ.ա. XV դարի երկրորդ կես - XIV դարի սկիզբ) կազմակերպած արշավանքներին, Հայկական լեռնաշխարհի պետականությունների հետ նրանց ունեցած տարաբնույթ փոխհարաբերություններին: Այդ տեքստերի հաղորդած տեղեկություններն ընդգրկում են Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածը՝ Բարձր Հայքը և Ծոփքը, ինչպես նաև հարակից շրջանները, այսինքն՝ խեթական քաղաքակրթական աշխարհի հետ Հայկական լեռնաշխարհի կոնտակտային գոտու ողջ երկայնքը:

Թուդխալիյաս II-ի և Աննուվանդաս I-ի «Տարեգրությունները»²

Թուդխալիյաս II-ի և Աննուվանդաս I-ի «Տարեգրությունները», որոնց՝ Հայկական լեռնաշխարհին վերաբերող հատվածները պահպանվել են խիստ վնասված ենթատեքստերում, կարևոր են այն առումով, որ այստեղ առկա են ապագա հայկական Ծոփք նահանգի տարածքի նվաճման մասին ամենավաղ հիշատակությունները:

Այս երկու տեքստերում ներկայացված են մասնավորապես, Թուդխալիյասի կառավարման առաջին վեց տարիներին տարբեր ուղղություններով կազմակերպված արշավանքները դեպի Արևմտյան Փոքր Ասիա, դեպի հյուսիս և վերջապես արևելք: Հենց վերջինիս ըն-

րակությունը և ուսումնասիրությունը հեղինակի՝ ՀՀ Գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող պայմանագրային-թեմատիկ ծրագրի առարկա է:

² Թուդխալիյաս II = Laroche E., Catalogue des textes Hittites, Paris, 1971 (այսուհետ՝ CTH), 142: Բեկորների միակցումը և առաջին գիտական հրատարակությունն իրականացրել է Օ. Կարրուբան՝ Carruba O., Beiträge zur mittel-hethitische Geschichte. I-II, Studi Micenei ed Egeo-Anatolici 18, 1977, S. 156ff., Աննուվանդաս I = CTH 143 (տես Götze A., Madduwattas (=Mitteilungen der Vorderasiatisch-Ägyptischen Gesellschaft), Leipzig, 1928, S. 156ff.; Goetze A., Kizzuwatna and the Problem of Hittite Geography, New Haven, 1940, p. 56ff.; Carruba O., Beiträge zur mittel-hethitische Geschichte. I-II, Studi Micenei ed Egeo-Anatolici 18, 1977, S. 166ff.):

թացքում է, որ նվաճվեց Ծոփքի տարածքում գոյություն ունեցող Իսուվա պետությունը: Այստեղ հիշատակվում է նաև Իսուվային նրա հարավային հարևան Միտտանիի (տեքստում՝ Խուրրի) աջակցության մասին: Այս առնչությամբ հիշատակելի է նույն արքայի և Կիցցուվատնայի (Կիլիկիա) արքա Սունաստուրայի միջև կնքված պայմանագիրը (տե՛ս ստորև), որտեղ Իսուվայի նվաճումը ներկայացված է շատ ավելի հանգամանորեն: Առնուվանդասի տեքստում որոշակիացվում է Իսուվային աջակցող Միտտանիի արքայի անունը՝ Սաուստատար:

KUB XXIII 72+³

Առնուվանդաս I-ի և Վերին Եփրատի ավազանի մեծաքանակ երկրների միջև կնքված պայմանագիր-հրահանգ: Տեքստում շարադրվում են պայմանագրի կնքմանը նախորդած վերինեփրատյան մի շարք երկրների (Պախխուվա, Արխիտա) հակախեթական ապստամբության իրադարձությունները. թվարկվում են շուրջ երկու տասնյակ երկրներ և բնակավայրեր: Այս արտակարգ կարևոր տեքստը թույլ է տալիս պատկերացում կազմել վերինեփրատյան տարածաշրջանի պատմական աշխարհագրության մասին: Ըստ էության սա խեթական տեքստերի շարքում Իսուվայի և հարակից տարածքների վերաբերյալ տեղանվանական և անձնանվանական առավել մեծաքանակ նյութ պարունակող սկզբնաղբյուրն է:

Միաժամանակ այս տեքստը թույլ է տալիս վստահաբար եզրակացնել, որ քննարկվող ժամանակահատվածում Իսուվայում և դրան

³ Պայմանագրի տեքստի իրատարակությունները տե՛ս Sayce A. H., Hittite and Moscho-Hittite, *Revue hittite et asanique*, 1930, 1, fasc.1, pp. 5-8 (թարգմանաբար); Gurney O. R., *Mita of Pahhuwa*, *Liverpool Annals of Archaeology and Anthropology*, 1948, 28, pp. 32-48 (թարգմանաբար); Hoffner H. A. Jr., *A Join to the Hittite Mita text*, *Journal of Cuneiform Studies*, 1976, 28, pp. 60-62 (1684/ս կցաբեկորը); Խաչատրյան Վ.Ն., *Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում*, Երևան, 1998, էջ 87-93 (հատված. թարգման.): Kosyan A., *Arnuwandas I in the East*, *Armenian Journal of Near Eastern Studies*, 2006, I, pp. 72-97; Reichsmuth S., *Mita von Pahhuwa (CTH 146)*. - In: *Hethitologie in Dresden*, Bd. 35 (Hrsg. R. Fischer, D. Groddek und H. Marquardt), Wiesbaden, 2011, S. 109-144 (= *Dresdner Beiträge zur Hethitologie*).

հարակից շրջաններում դեռևս գոյություն չունեցող միասնական պետականություն: Տարածաշրջանը ներկայացված էր նոմային տիպի մեծաքանակ ցեղային կառույցներից:

KUB XXVI 62⁴

Այս տեքստը Խեթական տերության ազդեցության ոլորտում ընկած Փոքր Ասիայի հյուսիսարևելյան շրջանների (կասկական ցեղերի տարածքը) և վերինեփրատյան երկրների առանձին բնակավայրերից զինձառայության վերցված զինվորների ցուցակն է:

Հիշատակվող տեղանուններն են՝ Սալա, Էրխիտա (նախորդ տեքստում՝ Արխիտա), Լիտտա, Տեմիյա (նախորդում՝ Տիմմիյա), որոնցից երեքը հայտնի են նաև այլ աղբյուրներից: Մասնավորապես Արխիտա քաղաքը (բառասկզբում ա:ե հերթագայությամբ) հիշատակվում է KUB XXIII 72+-ում՝ որպես հակախեթական դիրքորոշում ունեցող Պախխուվայի դաշնակից, ինչպես նաև խեթա-հայասական մի պայմանագրում (KUB XXVI 39) հիշատակվում է Արխիտայի Ամպրոպի աստվածը⁵: Իսկ Տեմիյան նույնն է, ինչ միևնույն տեքստում պախխուվացիների հարձակումներից տուժած Տիմմիյան⁶: Ինչ վերաբերում է Սալային, ապա այն վկայված է մեկ այլ տեքստում՝ որպես Խեթական տերության ազդեցության գոտու արևելյան շրջաններից մյուս կողմ ընկած բնակավայր⁷:

⁴ Այս և նմանատիպ տեքստերի մի մասի հրատարակություն – հետազոտությունը տե՛ս von Schuler E., Die Kaškäer, Berlin, 1965, 134ff.: Ստորև հղվող հատվածի գիտական տառադարձումը՝ S. 145; նաև Քոսյան Ա., Խեթական KUB XXVI 62 սեպագիր տեքստը և վերին Եփրատի ավազանի պատմական աշխարհագրության խնդիրները, ՄՄԱԵԺ, 2004, XXIII, էջ 472-484 (գիտ.տառադ., թարգմ. և մեկնաբանություն):

⁵ Տեքստի հրատարակությունը և մեկնաբանությունները Տե՛ս Քոսյան Ա., Հայասայի աստվածները (KUB XXVI 39), ՄՄԱԵԺ, 2005, XXIV, 444-457:

⁶ Տեմիյա-Տիմմիյայի առնչությամբ առաջարկվել է համադրությունը անտիկ աղբյուրների Ցիմենոսի և հետագայի հայկ. Զիմին բնակավայրի հետ Երզնկայի դաշտում (կարծիքների համար տե՛ս Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004, էջ 97):

⁷ Տե՛ս Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 84:

KBo I 5+⁸

Պայմանագիր Թուրխալիյաս II-ի և Կիցցուվատնայի արքա Սունաստուրայի միջև, որը պահպանվել է երկու լեզուներով՝ խեթերեն և արքադերեն (յուրաքանչյուրը մի քանի տարբերակով): KBo I 5+-ը պայմանագրի արքադերեն տարբերակն է: Նախկինում այս պայմանագիրը վերագրվում էր Սուպալիուլիումաս I-ին, սակայն հետագայում վերաթվագրվեց ավելի վաղ շրջանով⁹:

Պայմանագրի ներածականում խեթական արքան որպես նախադեպ հիշատակում է Իսուվայի նվաճման հետ կապված մի իրադարձություն: Ըստ նրա՝ Իսուվան խեթական տիրապետության տակ էր գտնվել, սակայն հետագայում ապստամբել էր ու խեթական զորքի առաջխաղացման ժամանակ հեռացել Խուրրի երկիր (Միտտանի): Վերջինիս արքան հրաժարվել էր վերադարձնել փախստականներին, ավելին՝ միտտանական զորքը մտել և ասպատակել էր Իսուվան: Այս տեղեկությունը կարող է վկայել իրագույն այն ենթադրության, որ նախքան խեթական նվաճումը Իսուվան պետք է դաշնակցային հարաբերություններ ունենար իր հարավային հարևան Միտտանիի հետ:

KUB XXXI 103¹⁰

⁸ CTH 41 և 131, հրատ.՝ Weidner E., *Politische Dokumente aus Kleinasien*, Leipzig, 1923, S. 88ff. Götze A., *Das hethitische Fragment des Šunaššura-Vertrags*, *Zeitschrift für Assyriologie*, 1928, 36, S. 11-18. Del Monte G., 1981, *Note sui tratti fra Hattusa e Kizuwatna*, *Oriens Antiquus*, 1981, 20, p. 215ff. Beckman G., *Hittite Diplomatic Texts*, II ed., Atlanta, 1999, Nr. 2, p. 17ff. (թարգման.): Altman A., *The Išua Affair in the Šattiwaza Treaty (CTH 51: A, obv. 10-24) Reconsidered*, *Ugarit-Forschungen*, 2001, Bd.32, p. 122ff. (հատված. թարգման.):

⁹ Wilhelm G., *Zur ersten Zeile des Šunaššura-Vertrages* - In: *Documenta Asiae Minoris* (Fs.H.Otten), Wiesbaden, 1988, S. 359-370; նաև՝ Del Monte G., *Note sui tratti fra Hattusa e Kizuwatna*, *Oriens Antiquus*, 1981, 20, p. 219f. և Beal R., *The History of Kizuwatna and the Date of the Šunaššura Treaty*, *Orientalia*, 1986, N 55, pp. 424-445.

¹⁰ CTH 212.1, թարգմանաբար հրատ. Torri G., *Militärische Feldzüge nach Ostanatolien in der mittelhethitischen Zeit*, *Altorientalische Forschungen*, 2005, 32/2, S. 391ff. (հատվածական); Devecchi E., *Trattati internazionali ittiti*, Brescia, 2015, p.95f. (թարգմանաբար):

Այս տեքստը, որը խեթական արքայի և վերինեփրատյան երկրներից մի քանիսի հետ կնքված պայմանագիր կամ հրահանգ է, անմիջականորեն առնչվում է KUB XXIII 72+-ին: Պետք է նշել, որ այն կազմված է հողի նվիրատվության ակտերին հատուկ եղանակով: Սա կարող է ակնարկել հոգուտ այն ենթադրության, որ, հնարավոր է, KUB XXIII 72+-ի կնքմանը նախորդել է վերինեփրատյան տոհմային ազնվականության որոշ ներկայացուցիչներին հողատարածքների հատկացումը (հնարավոր է՝ խեթական արքան ուղղակի ճանաչել է նրանց ժառանգական իրավունքները)՝ որպես ապագայում այդ անձանց հավատարմության երաշխիք:

Այստեղ հիշատակվում են KUB XXIII 72+-ում վկայված Պախխուվա, Խուրրի երկրները, Մալդիա քաղաքը, նաև Իսուվայում և հարակից շրջաններում գործող հակախեթական ուժերից մեկի առաջնորդը (ոմն Խասսանաս): Դատելով այս զգալիորեն տուժած տեքստի պահպանված հատվածներից՝ խեթական արքան վերինեփրատյան երկրներից ակնկալում էր հավատարմություն և որոշակի պարտավորություններ (աջակցություն արքային պատերազմի ժամանակ, այլ պետության բանագնացի ձերբակալություն և այլն):

KUB XXXI 79¹¹

Այս տեքստը խեթական արքայի կողմից թագուհուն ուղղված նամակ է ինչ-որ գետով կասկական աշխատողներին մթերք հասցնելու մասին: Այստեղ նկարագրվում է Պիտոիյարիգա քաղաքից նավակներով կամ լաստերով մինչև Սամուխա հացի առաքումը: Ճանապարհին հիշատակվում է Արծիյա քաղաքը, որտեղից ևս լրացուցիչ մթերք էր բեռնվել:

Միևնույն նավարկելի գետի ափին վերոհիշյալ բնակավայրերի գտնվելու փաստը կարևոր է ինչպես քննարկվող ժամանակաշրջանի պատմական աշխարհագրության խնդիրների, այնպես էլ վերինեփրատյան տարածաշրջանում խեթական տերության արտաքին քաղա-

¹¹ CTH 188, հրատ. Hagenbuchner A., 1989, Die Korrespondenz der Hethiter, Heidelberg, 1989 (= TdH 15), S. 136ff.; Hoffner H. A. Jr., 2009, Letters from the Hittite Kingdom, Atlanta, 2009, p. 81ff.; Marizza M., Lettere ittite di re e dignitari, Brescia, 2009, p. 123ff.

քականության լուսաբանման տեսանկյունից: Խնդիրն այն է, որ ներկայումս դեռևս լուծված չէ այս գետի ինքնության հարցը (Եփրատ կամ Հալիս)¹²:

IBoT I 36¹³

Այս ընդարձակ տեքստը խեթական մայրաքաղաք Խաթթուսսում գտնվող արքայական պալատի պահակային ծառայության վերաբերյալ հրահանգ է, որտեղ հանգամանորեն ներկայացվում է այդ ծառայության առօրյան:

Ի թիվս այլ հարցերի՝ այստեղ հիշատակվում են ծառայության կազմ ընդգրկված կումմախացի զինվորները, ինչը կարող է վկայել արևելյան շրջաններից՝ վերջիններիս նվաճումից հետո զինվորների հավաքագրման մասին:

KBö XVI 45¹⁴

Այս տեքստի թվագրումը մ.թ.ա. XV դարի շրջանակներում պարզ է հնագրական չափանիշների լույսի ներքո¹⁵, սակայն դրա վերագրումը

¹² Եփրատ = Bilgiç E., Die Ortsnamen der “kappadokischen” Urkunden im Rahmen der alten Sprachen Anatoliens, Archiv für Orientforschung, 1945-1951, 15, S. 29f.; Houwink ten Cate Ph. H. J., The Records of the Early Hittite Empire, Istanbul, 1970, p. 62 n.31; Хачатрян В. Н., Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971, стр. 54сл.; Ünal A., Hattušili III, Bd.1,1 und 1,2, Heidelberg (= TdH 3), S. 209f.; Laroche E., Toponymes Hittites ou Pre-Hittites dans la Turquie moderne, Hethitica, 1985, VI, p. 91f. և այլն; Հալիս = Garstang J. and Gurney O. R., The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 33ff.; Forlanini M., Appunti di geografia etea. - In: Studia Mediterranea 1 (=Fs.P.Meriggi), Pavia, 1979, p. 184 n. 105 և այլն:

¹³ CTH 262: հրատ. Jakob-Rost L., Beiträge zum hethitischen Hofzeremoniell (IBoT I 36), Mitteilungen des Instituts für Orientforschung, 1966, 11, S. 165ff.; Güterbock H.G. and den Hout Th. P. J., The Hittite Instruction for the Royal Bodyguard, Chicago (= Assyriological Studies 24), 1991.

¹⁴ CTH 832 («տարբեր բովանդակությամբ խեթերեն բեկորներ» վերտառությամբ); առայժմ հրատարակված է միայն ինքնագիր եղանակով:

¹⁵ Koşak S., Konkordanz der hethitischen Keilschrifttafeln, T.2. Die Textfunde der Grabungen in Boğazköy 1931-1939, Wiesbaden, 2005, S. 166.

որևէ խեթական արքայի խնդրահարույց է: Թերևս այն կարող է տարվել նույն դարի առաջին կես (հնարավոր է՝ Տելեպինուս): Նմանապես պարզ չէ դրա բնույթը (պայմանագիր, հրահանգ կամ որևէ այլ կարգի տեքստ): Նկատվել է, որ սա, այնուամենայնիվ, կարող է պայմանագիր լինել, քանի որ խեթական արքան դիմում է հայասացիներին հոգնակի թվի երկրորդ դեմքով, ինչը հիշեցնում է «Թուդխալիյաս II – Մարիյա+ հայասացիներ» պայմանագրի ոճը¹⁶: Տեքստի կառուցվածքը և որոշ օգտագործված բառերի կիրառությունը վկայում են դրա պատկանելությունը այսպես կոչված *išhiul* տիպի պայմանագրերին, որոնք հատկանշական են Առնուվանդաս I-ի շրջանին¹⁷:

KOSYAN ARAM

ARMENIAN HIGHLAND IN THE XV CENTURY B.C. CUNEIFORM HITTITE SOURCES (OVERVIEW OF TEXTS)

A number of Hittite cuneiform texts dated with the XV century B.C. contain valuable information regarding several polical entities located in the western provinces of the Armenian Highland - Isuwa, Maldiya, Zuhma, Hurri etc. Among them are of considerable interest the Annals of the kings Tudhaliya II and Arnuwanda I, a collective treaty-instruction dated with Arnuwanda I, the Treaty between Tudhaliya II and Sunassura of Kizzuwatna, also KUB XXVI 62, KUB XXXI 103, KUB XXXI 79, KBo XVI 45 and IBoT I 36.

¹⁶ Տե՛ս Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 128, պայմանագիրը տե՛ս Քոսյան Ա., մ.թ.ա. XIV դարի խեթա-հայասական միջպետական պայմանագրերը, Երևան, 2016, էջ 60-67:

¹⁷ Pecchioli Daddi Fr., A "New" Instruction from Arnuwanda I. - In: Silva Anatolica: Anatolian Studies Presented to Maciej Popko on the Occasion of his 65th Birthday (ed. P. Taracha), Warsaw, 2002, S. 263; Pecchioli Daddi Fr., Die mittelhethitischen *išhiul*-Texte, Altorientalische Forschungen, 2005, 32/2, S. 286, Anm. 51. Հեղինակը նշում է, որ նույնատիպ ընդամենը մեկ տեքստ է առկա, որը կազմված է Առնուվանդաս I-ի օրոք (KUB XXVI 10): Նա նշում է տեքստում EN/BEL^{NA4}KIŠIB «կնիքի տեր» եզրույթը, որը չնայած վկայված է Տելեպինուսի շրջանից, սակայն պայմանագրի ոճը հիշեցնում է Առնուվանդասի շրջանը: